ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

21-ը դեկտեմբերի 2016թ.

ք. Երևան

ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

***Գնահատողներ՝***
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ՎՏ վարչության պետի տեղակալ Լ. Խաչատրյան
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության ՎՔՆ, կույտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔԾԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռիստյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,

***«ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

*(Ա. Գրիգորյան)*

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Տ.Աբրահամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «տպագրության» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Յասոն» ՍՊԸ |
| 2 | « Բեկորհրատ» ՍՊԸ |
| 3 | «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ |
| 4 | «Հայկարլի» ՍՊԸ |
| 5 | Ա/Ձ Իրինա Մելքոնյան |
| 6 | «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ |
| 7 | Ա/Ձ Արման Ասմանգուլյան |
| 8 | «ՍԱՄԵՐՍՈՆ» ՍՊԸ |
| 9 | «Լեգալ Պլյուս» ՍՊԸ |
| 10 | Ա/Ձ Վարդան Մկրտչյան |
| 11 | «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն ԱՀ ԲԲԸ |
| 12 | «Լիմուշ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.*

**2. «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

2.1 Թվով 12 մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ Ա/Ձ Ա.Ասմանգուլյանի, որը 51-րդ, 69-րդ և 175-րդ չափաբաժինների մասով և «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն 32-րդ չափաբաժնի մասով armeps համակարգում գնային առաջարկ չեն կցել, ուստի հանձնաժողովի որոշմամբ վերջիններիս հայտերը վերը նշված չափաբաժինների մասով մերժվեց:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի՝

– Ա/Ձ Արման Ասմանգուլյանի հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ հայտի Հավելված 1-ում բացակայում է 175-րդ չափաբաժնին մասնակցելու մասին տեղեկությունը, այնինչ Հավելված 4-ում տվյալ չափաբաժնում ներկայացվել է գնային առաջարկ: Գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակցին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

-«ՌՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԻ» տպագրատուն ԱՀ ԲԲԸ էլեկտրոնային հայտում , այդ թվում նաև Հավելված 4-ում, բացակայում է էլեկտրոնային ստորագրությունները, ուստի վերջինիս հայտը հանձնաժողովի որոշմամբ մերժվեց:

Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Տ.Աբրահամյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. Տես Հավելված 1.

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի՝

Հանձնաժողովը որոշեց՝ 131-րդ չափաբաժնի մասով մերժել «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ -ի, 183-րդ չափաբաժնի մասով մերժել «Բեկորիրատ» ՍՊԸ-ի, 57-րդ և 81-րդ չափաբաժինների մասով մերժել «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի, 198-200-րդ և 210-րդ չափաբաժինների մասով մերժել Ա/Ձ Վարդան Մկրտչյանի, 102-րդ չափաբաժնի մասով մերժել «Լիմուշ» ՍՊԸ-ի, 3-րդ, 6-րդ,10-րդ, 12-13-րդ, 22-26-րդ,32-րդ, 34-րդ, 38-րդ, 46-րդ,59-րդ,60-61-րդ, 77-րդ,85-86-րդ, 91-րդ, 98-րդ, 102-106-րդ, 120-րդ, 122-124-րդ, 126-րդ, 131-134-րդ, 143-րդ, 146-րդ, 148-րդ, 150-151-րդ, 165-րդ, 169-րդ, 176-րդ, 179-180-րդ, 183-րդ, 190-րդ, 202-րդ, 205-206-րդ, 227-րդ, 230-235-րդ, 237-րդ, 242-րդ, 245-247-րդ չափաբաժինների մասով մերժել «Հենակետ» ՍՊԸ-ի հայտերը, քանի որ ներկայացված գնային առաջարկներում «ինքնարժեք», «շահույթ» և «ԱԱՀ» բաղադրիչների թվային հանրագումարը չէր համապատասխանում առաջարկված ընդամենը գներին՝ այսինքն մասնակիցների ներկայացրած հավելված N4-ը տվյալ չափաբաժինների մասով չէին համապատասխանում հրավերի պահանջներին:

3.4 Քանի որ «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով ընթացակարգի 17-րդ չափաբաժնի, 169-րդ չափաբաժնի և 179-րդ չափաբաժնի մասով մասնակիցների առաջարկած գները նվազագույնն են և հավասար, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 17.01.2017թ. ժամը $11^{00}$-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված բոլոր մասնակիցների հետ ըստ չափաբաժինների վարվել են միաժամանակյա բանակցություններ: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին «ՍԱՄԵՐՍՈՆ» ՍՊԸ-ն 17-րդ չափաբաժնի համար առաջարկել է 2628 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, «Յասոն» ՍՊԸ-ն 169-րդ չափաբաժնի համար առաջարկել է 288 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, «Հայկարլի» ՍՊԸ-ն 179-րդ չափաբաժնի համար առաջարկել է 312 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Վերջիններս հանձնաժողովի որոշմամբ բանակցությունների արդյունքում ճանաչվեցին 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ համապատասխան չափաբաժիններում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

*(Տ.Աբրահամյան)*

4.1 **06.02.2017թ.** «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել հետևյալ մասնակիցները. Տես՝ Հավելված 1 և սույն արձանագրության 3.4 կետ:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ(եթե առկա է) զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Տ.Աբրահամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

«ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱԾՁԲ-8/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՉ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

գնահատող Վ.Գասպարյան

գնահատող Լ.Խաչատրյան

գնահատող Գ. Ռիստյան

գնահատող Ա.Հակոբյան

գնումները համակարգող Տ.Աբրահամյան